ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԷԻ-ԳՀԾՁԲ-2019/1

ք. Երևան «8» հունվարի 2020թ.

«Էներգաիմպեքս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մարինե Քոչարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **Գոռ Խումարյան ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Գոռ Խումարյանի,** որը գործում է կանոնադրության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **հաշվապահական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1,200,000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը

:

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
Էներգաիմպեքս ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Հանր. հրապարակ Կառավարական 3 ՀՎՀՀ՝ 02651972 Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ Հաշվեհամար՝2474702595540000 Տնօրեն՝ Մարինե Քոչարյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	---------- (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«8» հունվարի 2020թ. կնքված
ԷԻ-ԳՀԾՁԲ-2019/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	79211100	Սույն Պայմանագրով նախատեսվում է «Կատարող»-ի կողմից «Պատվիրատու»-ին ՀՀ օրենսդրության համաձայն հաշվապահական հաշվառման ընդհանուր բնույթի ծառայությունների մատուցում, որը մասնավորապես ներառում է հետևյալը. - Հաշվապահական հաշվառման վարում «Հայկական ծրագրեր» համակարգով, ներառյալ ֆինանսական, կառավարչական ու հարկային հաշվառում, փաստաթղթերի կազմում; - Պատվիրատուի կողմից հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման օժանդակում, ներառյալ համակարգերի ինտեգրման ու ավտոմատցման աշխատանքներին մասնակցություն; - Ֆինանսական հաշվետվությունների կազմում՝ Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (IFRS) համաձայն; - Տարեկան, եռամսյակային և ամսական բոլոր հարկային, վիճակագրական և այլ պարտադիր հաշվետվությունների կազմում և ներկայացում համապատասխան պետական մարմիններին; - Բանկային փոխանցումների կազմակերպում; - Հարկային խորհրդատվություն Պատվիրատուին Նշված ընդհանուր բնույթի ծառայությունների շարքին են դասվում նաև հետևյալ ծառայությունները. 1) Աշխատանքային հարաբերությունների վերահսկողության իրականացում, մասնավորապես հետևյալ գործառույթների իրականացում. - Համաձայն «Պատվիրատու»-ի տնօրինության որոշումների, հրամանների, կարգադրությունների աշխատակիցների ընդունում, գրանցում, հաշվառում, ազատում, - Աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի, հրամանների պատրաստում - Քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ընդունման հանձնման ակտերի կազմում - Աշխատանքային պայմանագրերի փոփոխման և լուծման վերաբերյալ գրանցումների իրականացում, 2) Հարկային մարմիններին հաշվետու տարվա հաշվետվությունները ներկայացնելուց հետո, վերոնշյալ փաստաթղթերը «Պատվիրատու»-ի տնօրինությանը հանձնում: 3) Հայկական Ծրագրերում ստեղծված տվյալների բազան և էլեկտրոնային այլ տեսակի փաստաթղթերը դրանց պահանջի	դրամ	1,200,000	1	ՀՀ, ք. Երևան, Հանր. հրապարակ Կառավարական 3	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2020թ: դեկտեմբերի 30-ը

		դեպքում տնօրինությանը հանձնում 4) Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի պատրաստում 5) Աշխատավարձի, արձակուրդայինի, վերջնահաշվարկի պարգևավճարների,հավելավճարների նպաստների հաշվարկի իրականացում 6) Աշխատակիցների մուտք ՀԾ 7) Աշխատողների պահանջով առձեռն վճարվող գումարի հաշվարկի ներկայացում 8) Արձակուրդ գնացողների ֆայլի հաշվառում (ով որ ժամանակահատվածի համար է գնում և ինչքան ունի չօգտագործված արձակուրդ), արձակուրդի պահուստի հաշվարկում 9) Աշխատողների ընդունման և ազատման, պաշտոնի փոփոխության և այլ գրանցման հայտերի ներկայացում 10) Ստացած ծառայությունների, հիմնական միջոցների, արագամաշ առարկաների և այլ ստացած Հ/Ա մուտք ՀԾ 11) Հաշիվ ապրանքագրեր և այլ հաշիվների դուրս գրում e-invoicing ծրագրով 12) Աշխատավարձի գծով վճարման հանձնարարագրերի պատրաստում ՀԾ-ում և դրանց արտահանում կլիենտ բանկ միջավայր 13) Հարկային պարտավորությունների պատրաստում ՀԾ-ում և դրանց արտահանում կլիենտ բանկ վճարման հանձնարարագրերով 14) Վարձակալության, ձեռք բերվող ծառայությունների և ապրանքների դիմաց վճարումների և այլ վճարման հանձնարարագրերի պատրաստում ՀԾ-ում դրանց արտահանում կլիենտ բանկ վճարման հանձնարարագրերով 15) Հարկային պարտավորությունները հաշվարկի իրականացում 16) Հարկային մարմինների հետ հարկային պարտավորությունների մնացորդի ստուգում 17) Հիմնական միջոցների ամորտիզացիայի հաշվարկ, հիմնական միջոցների հաշվառում, համեմատում գույքագրման ցուցակների հետ, հին հիմնական միջոցների դուրսգրում 18) Առհաշիվ անձանց տրված գումարների հաշվառում 19) Առհաշիվ գումարների ծախսման մասին Հաշվետվության կազմում 20) Առհաշիվ անձանց տրված գումարների մասին հաշվետվությունների մուտքագրում ՀԾ 21) գործուղման (Օրապահիկի և գիշերավարձ) ծախսերի հաշվարկների իրականացում 22) գործուղման հաշվետվությունների պատրաստում 23) գործուղման հաշվետվությունների մուտքագրում ՀԾ 24) ընկերության բանկային հաշիվ տվյալների մուտքագրում ՀԾ (4 հաշվարկային հաշիվ), ներառյալ. - Ամենօրյա բանկային վճարման հանձնարարագրերի պատրաստում, - Դրամական հոսքերի վերահսկում և հաշվառում, - Ըստ անհրաժեշտության՝ ստանալ նամակագրություններ, տեղեկանքներ եվ հաշվի քաղվածքներ, վերահսկել տոկոսավճարների առաջացումը, - Բոլոր տեղական հաշվապահական մատյանների վարումը՝ օգտագործելով Հայկական Ծրագրերը: 25) «Պատվիրատու»-ի					

		դրամարկղային գործառնությունների կազմակերպում և պատասխանատու վերահսկողության իրականացում, մասնավորապես՝ - Ամենօրյա դրամարկղային մուտքի և ելքի օրդերների պատրաստում և գանձապահներին ըստ անհրաժեշտության տրամադրում, - Կանխիկ դրամի հոսքերի վերահսկողության և հաշվառման իրականացում, - Անձանց առհաշիվ տրված միջոցների հաշվետվությունների ստուգում, վարում և վերջնահաշվարկների իրականացնում: - Դրամարկղային գրքերի ստուգում: 26) քարտային քաղվածքի մուտքագրում ՀԾ 27) Արտարժույթի բանկի հաշվառում 28) Ստացված կանխավճարների/դեբիտորական պարտքերի և կրեդիտորական պարտքերի / տրված կանխավճարների հաշվառում (ժամանակին վճարման պարտավորությունների հետևում) 29) Եկամտային հարկի հաշվարկի կազմում 30) Վիճակագրական ծառայության հաշվետվություն կազմում (ներառյալ տարեկան) 31) ԱԱՀ հաշվարկի և դուրս գրված մատուցված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի կազմում 32) Շահութահարկի հաշվարկի իրականացում 33) Ոչ ռեզիդենտին վճարած եկամուտների պահված շահութահարկի հաշվարկի իրականցում 34) Լիազոր մարմին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների՝ շահութաբաժին, ինքնարժեքի հաշիվ, սակագնի հաստատում 35) Ըստ անհրաժեշտության ՀՀ կառավարությանը պատկանող գույքի վերաբերյալ Լիազոր մարմնին ներկայացվող հաշվետվությունների կազմում ՝ եկամուտ ծախս, դրամական միջոցների հոսքի հաշվետվություն, ոչ նյութական ակտիվների վերաբերյալ տեղեկանք, դեբ./կրեդ. պարտքերի շարժի վերաբերյալ հաշվետվություն 36) Նախահաշիվների և կատարողականների պատրաստում Պատվիրատուի խորհրդին ներկայացնելու և հաստատելու համար 37) Ընկերության կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվություններ - Հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյուքի մասին հաշվետվություն, ամփոփ առաջարկություն շահութաբաժնի վճարման, շահութաբաժնի հաշվարկ, ամփոփ հաշվարկ շահույթի կանխատեսման հաջորդ 3 տարվա համար 38) Ֆինանսական հաշվառման հետ կապված արձանագրությունների կազմում տնօրենների խորհրդի և բաժնետերերի ընդհանուր ժողովի համար 39) Աուդիտի գործընթացներին աջակցություն, աուդիտի համար պահանջվող տվյալների և ըստ անհրաժեշտության հաշվապահական հաշվառմանը վերաբերող ցանկացած փաստաթղթի կազմում և տրամադրում 40) Հաշվապահական և հարկային հաշվառումների առանձնացված վարում 41) Ստացված փոխառությունների և					

		շնորհների առանջնացված հաշվառում, հասույթի ճանաչում ըստ ծախսագրման 42) Վճարման հանձնարարագրերի կոդավորում ըստ հաշվառման սկզբունքների 43) Դրամական միջոցների արդյունավետ օգտագործման համար միջոցառումների ձեռնարկում (դրամական միջոցները որ բանկում, ինչ տոկոսադրույքով, ինչ քանակով և ինչ ժամկետով ներդնել որպես ավանդ մաքսիմալ եկամուտ ստանալու համար) 44) Տնօրենի կողմից ընթացիկ առաջադրանքների կատարում, շաբաթական ժողովների մասնակցություն 45) Ընթացիկ աշխատանք իրավաբանի հետ (պայմանագրերի վերանայում, կարծիքի տրամադրում, հաճախորդների սպասարկման խնդիրների վերաբերյալ խորհրդակցություն) Լիազոր մարմինների կողմից կազմակերպված ստուգումների ժամանակ փաստաթղթերի և տվյալների տրամադրում, ներկայության ապահովում, բարձրացրած հարցերի պատասխանում: 46) Կատարողը պետք է պատասխանատու լինի իր հաշվապահական հաշվառման արդյունքում առաջացող ֆինանսական հետևանքների համար 47) Կատարողը պետք է ունենա մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն Վերը նշված պարտավորությունների կատարման համար պետք է ներգրավված լինեն 3 անձ: Նշած աշխատակիցներից առնվազն մեկը պետք է լինի որակավորված հաշապահ և ունենա հավասագիր ՀՀ ֆինանսերի նախարարության կողմից: Տնօրենի կողմից տրված այլ ոլորտային հանձնարարականների կատարում.					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՏԱՐՈՂ**

Էներգաիմպեքս ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Հանր. հրապարակ
Կառավարական 3
ՀՎՀՀ՝ 02651972
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
Հաշվեհամար՝2474702595540000
Տնօրեն՝ Մարինե Քոչարյան

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«8» հունվարի 2020թ. կնքված
ԷԻ-ԳՀԾՁԲ-2019/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79211100	*հաշվապահական ծառայություններ*	100000	200000	300000	400000	500000	600000	700000	800000	900000	1000000	1100000	1200000	1200000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Էներգաիմպեքս ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Հանր. հրապարակ
Կառավարական 3
ՀՎՀՀ՝ 02651972
Բանկ՝ Արդշինբանկ ՓԲԸ
Հաշվեհամար՝2474702595540000
Տնօրեն՝ Մարինե Քոչարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն